Գ. ԴԻՄԻՏՐՈՎԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Բուլղարական և միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման ականավոր գործիչ Գեորգի Դիմիտրովին գիտեն ու սիրում են մեր երկրի բոլոր ժողովուրդները։

Սոցիալիզմի առաջին երկիրը Գ. Դիմիտրովի երկրորդ հայրենիքն էր, որտեղ նա ապրեց երկար տարիներ, անմիջականորեն ու առավել խորությամբ ուսումնասիրեց սոցիալիստական շինարարության ընդհանուր օրինաչափությունները և հետագայում դրանք հմտորեն կիրառեց Բուլղարիայի կոնկրետ պայմաններում։ «Գեորգի Դիմիտրովի անունը,— ասել է Ա. Միկոյանը,— անսահմանորեն մոտ է ու հարազատ ամեն մի սովետական մարդու...։ Սովետական ժողովրդի համար ընկեր Դիմիտրովի անունն առանձնապես թանկ է նաև նրանով, որ իր հիանալի կյանքի ու պայքարի մի զգալի մասը Դիմիտրովն անցկացրել է Սովետական Միությունում, սովետական մարդկանց շրջանում...։ Լինելով իր հայրենիքի ջերմ ու նվիրված հայրենասերը, իր ժողովրդի և դասակարգի հավատարիմ զավակը, Գեորգի Դիմիտրովը միաժամանակ Սովետական Միության մեծ բարեկամն էր...։ Սովետական մարդիկ հարգում և սիրում են Գեորգի Դիմիտրովին այնպես ջերմ և անկեղծ, ինչպես սիրում է նրան իր բուլղար ժողովուրդը»[1]։ Գ. Դիմիտրովը հպարտանում էր Սովետական Միության բոլոր ժողովուրդների հաջողություններով, կապեր էր հաստատում նրանց շատ ներկայացուցիչների ու աշխատավորական կոլեկտիվների հետ։ Դ. Դիմիտրովին ճանաչում և նրա հետ կապեր էին պահպանում նաև հայ ժողովրդի զավակները։

Գ. Դիմիտրովի մասին Սովետական Հայաստանում առաջին անգամ իմանում են 1921 թ., երբ բուլղարահայ ականավոր կոմունիստ Ս. Շահբաղյանը մոտ երկու ամիս գտնվելով մեր հանրապետությունում, պատմում է Բուլղարիայի կոմունիստական կուսակցության, նրա ղեկավարներ Դ. Բլագոևի, Վ. Կոլարովի, Գ. Դիմիտրովի և մյուսների մասին, որոնց նա անձամբ գիտեր։ Հայ ժողովրդի ականավոր զավակներ Ա. Մյասնիկյանը, Վ. Ավանեսովը, Ա. Միկոյանը, Ռ. Քաթանյանը, Ա. Խալաթովը, Ռ. Խիտարովը, Գ. Ալիխանյանը, Թ. Մանդալյանը, Ա. Խանջյանը և ուրիշներ Գ. Դիմիտրովի հետ ծանոթացել էին 1921—1926 թթ. Մոսկվայում՝ Կոմինտերնի կոնգրեսներում, արհեստակցական միությունների ինտերնացիոնալում և զանազան խորհրդակցություններում։ «Գ. Դիմիտրովի հետ ես ծանոթացել եմ Կոմինտերնի 3-րդ կոնգրեսում, 1921 թ. ամռանը»,— գրել է Ա. Միկոյանը[2]։

---

[1] «Правда», 16.VI.1962.

[2] «Երեկոյան Երևան», 17. VII. 1972։

Սակայն հայ հասարակայնությունը, ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ արտասահմանում Գ. Դիմիտրովը լայնորեն հայտնի է դառնում Լայպցիգյան դատավարության ընթացքում, երբ նրան ու իր ընկերներին ֆաշիստական գնդաններից ազատելու համար պայքարում էին աշխարհի հակաֆաշիստական բոլոր ուժերը։

Ամեն օր մեր երկրի կենտրոնական, ինչպես նաև հանրապետական ու տեղական թերթերը բազմաթիվ նյութեր էին տպագրում Լայպցիգյան դատավարության և առանձնապես Գ. Դիմիտրովի մասին։ «Պրավդան» գրում էր. «Դիմիտրովի քաջարի պայքարը հսկայական արձագանք է գտնում մեր երկրում։ Չկա և ոչ մի բանվոր, որ չիմանա այդ անունը։ Մեր երկրի մարդկանց համար առանձնապես մոտ է ու հասկանալի Դիմիտրովի պայքարը, նրա ոճը, նրա թափը, նրա անձնվիրվածությունը...։ Խորը համոզմունքի զգացմունքներով ամեն օր մենք բաց ենք անում թերթերը և կարդում, թե ինչպես Դիմիտրովը, հեղափոխության այդ խիզախ մարտիկը, շրջապատված թշնամիներով, պայքարում է տոկուն և արի»[3]։

Հայաստանի ՄՈՊՐ-ի[4] կենտկոմի օրգան «ՄՈՊՐ-ի դրոշ» հանդեսը տպագրում է հոդվածներ, բանաստեղծություններ ու նկարներ, որոնք արտացոլում էին ֆաշիստական դատարանում Գ. Դիմիտրովի հերոսական վարքագիծը։ «Ամբողջ աշխարհի ուշադրությունն այժմ կենտրոնացած է Լայպցիգում մոտ երկու ամիս շարունակվող այսպես կոչված ռայխստագի դատավարության վրա...,— գրում էր «ՄՈՊՐ-ի դրոշը»,— ռայխստագի հրկիզման մեջ մեղադրվող կոմունիստները դուրս են գալիս մեղադրողներ»[5]։ Հանդեսը նշում էր, որ դատավարության ընթացքում Գ. Դիմիտրովը տեղնուտեղը բռնում էր ֆաշիստների դատարան բերած «վկաների» սուտն ու զրպարտությունը։

Դատավարությունից հետո Գ. Դիմիտրովի և նրա ընկերների Սովետական Միություն ժամանելու լուրը մեծ գոհունակությամբ է ընդունում նաև Սովետական Հայաստանի աշխատավորությունը։ Հանրապետության գործարաններում ու ֆաբրիկաներում, կոլտնտեսություններում ու սովխոզներում, բուհերում ու գիտահետազոտական ինստիտուտներում, զորամասերում տեղի են ունենում ժողովներ ու թռուցիկ միտինգներ, որոնց մասնակիցներն իրենց հիացմունքն էին հայտնում ֆաշիզմի դեմ Գ. Դիմիտրովի և նրա ընկերների մղած անձնվեր պայքարի համար, ողջունում էին նրանց, հրավիրում Սովետական Հայաստան։ «Սովետական Հայաստան» թերթի 1934 թ. մարտի 1-ի համարում կարդում ենք. «Ողջույն Դիմիտրովին։ Նոր ուժով շարունակենք պայքարը ֆաշիզմի գերյալների ազատագրման համար»։ 1934 թ. մայիսին Սովետական Հայաստանի մամուլում հրատարակվում է ՄՈՊՐ-ի՝ Սովետական Միության IV համագումարի ողջույնը թանկագին ընկեր Դիմիտրովին, «որի անունը մեծագույն պարծանքով է արտասանվում երկրագնդի բոլոր անկյուններում։ Ամենուրեք, ուր եռում է ճնշվածների պայքարը ճնշողների դեմ, Դիմիտրովի անու-

---

3 «Правда», 8.XII.1933.

4 ՄՈՊՐ-ը հեղափոխականներին օգնության միջազգային կազմակերպություն էր։ Հիմնվել է 1922 թ. Մոսկվայում՝ կապիտալիստական երկրներում բուրժուական տեռորի զոհերին և ՍՍՀՄ-ում ապաստանած քաղաքական վտարանդիներին օգնելու համար։ ՄՈՊՐ-ը իր կազմակերպություններն ուներ սովետական բոլոր հանրապետություններում։

5 «ՄՈՊՐ-ի դրոշ», 1933, № 9—10, էջ 9։

նը դարձել է միջազգային պրոլետարական համերաշխության աճող զորության դրոշը»[6]։

Գ. Դիմիտրովն անհապաղ պատասխանում էր իրեն ուղղված ողջույններին ու նամակներին։ Այդ պատասխաններում նա արտահայտում էր իր խորին շնորհակալությունը սովետական մարդկանց և կոչ էր անում շարունակել պայքարը՝ հանուն ֆաշիստական գնդաններում տառապող հեղափոխական մարտիկների և առանձնապես է. Թելմանի ազատման։ Պատասխանելով «Հայկինոյի» ֆաբրիկայի աշխատակիցներին, Գ. Դիմիտրովը գրում էր. «Թող ՍՍՀՄ ժողովուրդների նոր հաղթանակը, որոնց հզոր ձայնը կանգնեցրեց մեր վրա կախված ֆաշիստական դահիճների ձեռքը, ավելի ոգեշնչի ձեզ՝ գերմանական և ավստրիական ֆաշիզմի բոլոր բանտարկյալներին և առաջին հերթին գերմանական բանվոր դասակարգի առաջնորդ ընկ. Թելմանին ազատագրելու համար մղվող պայքարում։ Ես շատ շնորհակալ եմ, որ դուք դարձել եք Դիմիտրովի անվան հարվածային կոլեկտիվ, և դրանում տեսնում եմ Սովետական Միությունն աշխատավորության խորը համերաշխության նոր արտահայտությունը բուրժուազիայի դիկտատուրայի դեմ մարտնչող գերմանական բանվորների հետ»[7]։

1934 թ. հունիսին Անդրկովկասի առաջավոր կոլտնտեսականները «Զարյա Վոստոկա» թերթի միջոցով նամակով դիմում են Գ. Դիմիտրովին, պատմելով նրան իրենց աշխատանքի, խնդիրների ու պարտավորությունների մասին։ Պատասխան նամակում Գ. Դիմիտրովը, ընդգծելով մրցության մեծ նշանակությունը, նշում էր. «Արևելքի երկրների հետ սահմանագծում Անդրկովկասի կոլտնտեսություններն ակնառու ցույց են տալիս ոչ միայն այդ երկրներին, այլև բալկանյան բոլոր երկրներին, որ միայն սովետական իշխանության օրոք, միայն կոլտնտեսային կարգի հիման վրա, բանվոր դասակարգի և նրա բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ է հնարավոր տարբեր ազգությունների աշխատավորության սերտ եղբայրական համագործակցությունը, նրանց նյութական բարեկեցության բարձրացումը և ազգային կուլտուրայի զարգացումը»[8]։

Գ. Դիմիտրովի հետ կապեր են հաստատում նաև Հայաստանի կոլտնտեսականները։ 1934 թ. հոկտեմբերին Փոքր Ղարաքիլիսա (այժմ Ազատան) գյուղը Կոմինտերնի գծով Գերմանիայից բանվորներ են դալիս՝ տեղի «Շիր-Կանալ» կոլտնտեսությանն օգնելու։ Նրանք նորոգում են սերմնազտիչները, կառուցում պահեստներ և այլն։ Նրանց խորհրդով կոլտնտեսականները որոշում են նամակ գրել Գ. Դիմիտրովին, պատմել իրենց կոլտնտեսության հաջողությունների մասին և ավտոմեքենա խնդրել։ Այդ նամակը նրանք Գ. Դիմիտրովին են ուղարկում Արմենուհի և Ալեքսան Ջիլոյանների միջոցով։ Ջիլոյան ամուսինները մեկնում են Մոսկվա, լինում Գ. Դիմիտրովի մոտ, արժանանալով նրա սիրալիր ընդունելությանը։ Զրույցի ժամանակ Ջիլոյան ամուսինները Գ. Դիմիտրովին հայտնում են, որ նա «Շիր-Կանալ» կոլտնտեսության անդամ է և նրան հանձնում են կոլտնտեսականի անդամատոմսը, որտեղ Գ. Դիմիտրովի հաշվին գրանցված էր 20 աշխօր։ Այնուհետև Ջիլոյան ամուսինները ազա-

---

6 Նույն տեղում, 1934, № 4—5, էջ 2։

7 ЦПА ИМЛ, ф. 146, оп. 2, з. е. 1281, л. 120.

8 Նույն տեղում, з. е. 1300, л. 1.

տանցիների անունից Գ. Դիմիտրովին խնդրում են նրանց կոլտնտեսության օգնել ավտոմեքենա ձեռք բերելու և ուղարկել իր լուսանկարը։ Գեորգի Դիմիտրովը խոստանում է բավարարել կոլտնտեսականների խնդրանքը, որի մասին հավաստում է նրանց ուղղած նամակում։ Դրան կից նա ուղարկում է իր լուսանկարը։ Նամակում գրված էր. «Թանկագին ընկերներ, ձեր կոլտնտեսության ներկայացուցիչներ ընկ. ընկ. Արմենուհի և Ալեքսանդր Զիլոյանները ինձ պատմեցին լավ բերքի համար մղած ձեր պայքարի մասին, ձեր հաջողությունների և ձեր կյանքի մասին։

Ես շատ ուրախ եմ, որ դուք համերաշխ, կազմակերպված ու բարեխիղճ աշխատանքով կարողացել եք հասնել այդպիսի խոշոր հաղթանակների և որ չորրորդ բրիգադը, որը կրում է Դիմիտրովի անունը, պարգևատրվել է ՍՍՀՄ հողժողկոմատի քաղաքացիության կողմից։

Ցավոք սրտի, ներկայումս հնարավոր չէ օգնել ձեզ ավտոմեքենա ձեռք բերելու համար, հուսով եմ, որ դա կհաջողվի 1935 թ. գարնանացանի կամպանիայի սկզբում։

Իմ բաժին աշխատանքը, խնդրում եմ, հանձնեք ՄՈՊՐ-ի ֆոնդին, ֆաշիզմի և պատերազմի դեմ պայքարող մարտիկների օգնության ուժեղացման և ընկ. Թելմանի ազատագրման պայքարի համար։

Ամբողջ սրտով ցանկանում եմ ձեզ առողջություն, հետագա հաջողություններ և նոր հաղթանակներ։

Բոլշևիկյան ողջույններով

Գ. Դիմիտրով»[9]։

Լուսանկարի վրա Դիմիտրովը մակագրել էր. «Ողջույն «Շիր-Կանալ» կոլտնտեսության կոլտնտեսականներին և կոլտնտեսուհիներին։

Գ. Դիմիտրով, Մոսկվա, 25.10.1934»[10]։

Շուտով Գ. Դիմիտրովը Փոքր Ղարաքիլիսա գյուղի կոլտնտեսությանն է ուղարկում մեկ բեռնատար ավտոմեքենա։ Այդ մասին «Սովետական Հայաստան» թերթը հայտնում էր. «Գեորգի Դիմիտրովը ի պատասխան կոլտնտեսականների նամակի, Լենինականի շրջանի Փոքր Ղարաքիլիսա գյուղի կոլտնտեսությանը նվիրել է մեկ բեռնատար ավտոմեքենա»[11]։

Գ. Դիմիտրովի նամակներն ու խորհուրդները օժանդակում էին կոլտնտեսականների աշխատանքային ակտիվության բարձրացմանը, ոգեշնչում նրանց նոր հաջողությունների։

Գ. Դիմիտրովի և Հայաստանի աշխատավորության կապերի ամրապնդման գործում խոշոր դեր է կատարում ՄՈՊՐ-ը և նրա Հայաստանի կազմակերպությունը։ ՄՈՊՐ-ի Հայաստանի կազմակերպության Կենտկոմի օրգան «ՄՈՊՐ-ի դրոշ», ապա «Կարմիր ֆրոնտ» հանդեսների էջերում հարուստ նյութեր կան Հայաստանի աշխատավորության հետ Գ. Դիմիտրովի կապերի մասին։ «Կարմիր ֆրոնտը» Փարիզի կոմունային նվիրված համարներում (1935 թ. № 3—4) ընթերցողներին հայտնում էր, որ մարտի 18-ին Փարիզի կոմունայի և ՄՈՊՐ-ի օրվա առթիվ Մոսկվայում, Միությունների տան դահլիճում, փայլուն

---

9 «Կարմիր ֆրոնտ», 1935, № 2, էջ 10—11։

10 ЦПА ИМЛ, ф. 146, а. е. 1310, л. 120.

11 «Սովետական Հայաստան», 14. VI. 1935



ելույթ ունեցավ Գ. Դիմիտրովը. «Ամբողջ դահլիճը մեծ խանդավառությամբ, ծափահարություններով և ուռաներով դիմավորեց մեծ հեղափոխականին։

Ընկ. Դիմիտրովն իր կրակոտ ճառը նվիրեց միջազգային հեղափոխության մարտիկներին օգնության կազմակերպման գործին»։ Հանդեսի հաջորդ 5-րդ համարը բացվում է Գ. Դիմիտրովի այդ ճառով, որը կրում է. «Բոլոր ուժերով օժանդակենք ՄՈՊՐ-ին» խորագիրը։

1935 թ. փետրվարի 10-ին Երևանում տեղի է ունենում ՄՈՊՐ-ի Հայաստանի կազմակերպության հոբելյանական պլենումը՝ նվիրված նրա 10-ամյակին։ Կապիտալի ճիրաններից ազատված և Հայաստան ներգաղթած գործագործ բանվորուհիները նիստի նախագահությանն են հանձնում ՄՈՊՐ-ի բջջիչ տանքերով գործված, ՄՈՊՐ-ի խորհրդանշանով զարդ՝ Գ. Դիմիտրովի համար։ «Նրանք համար աշխատանք են թափել,— գրում էր «Կարմիր ֆրոնտը»,— այն մարդու համար, որին միջազգային պրոլետարիատը պոկեց ֆաշիզմի արյունոտ ճանկերից»[12]։

Կոմունիստական ինտերնացիոնալի 7-րդ կոնգրեսում Գ. Դիմիտրովի ընդարձակ զեկուցումն ու եզրափակման խոսքը թարգմանվում և տպագրվում է շատ լեզուներով, այդ թվում նաև հայերեն[13]։ Տեղական թերթերը լուսաբանում են կոնգրեսի աշխատանքներն ու նյութերը, ընթերցողներին ծանոթացնում Կոմինտերնի գործկոմի գլխավոր քարտուղար Գ. Դիմիտրովի կյանքին ու գործունեությանը։ «Կարմիր ֆրոնտ» հանդեսը 1935 թ. 8-րդ համարում առաջնորդող հոդված նվիրելով Կոմինտերնի 7-րդ կոնգրեսի աշխատանքներին, Գ. Դիմիտրովի եզրափակման ճառից տպագրում է ՄՈՊՐ-ի գործունեության մեծագույն նշանակության մասին հատվածը և Գ. Դիմիտրովի նկարը՝ Կոմինտերնի գործկոմի գլխավոր քարտուղար ընտրվելու առթիվ։

Կոմինտերնի գործկոմում և ՄՈՊՐ-ի սիստեմում Գ. Դիմիտրովի ղեկավարությամբ աշխատում էին հայ ժողովրդի շատ անվանի զավակներ, կուսակցական ու հասարակական գործիչներ։

«Կարմիր ֆրոնտի» 1935 թ. 5-րդ համարում տպագրված են Գ. Դիմիտրովի երկու նամակը՝ ուղղված Շիրակի կոլտնտեսություններից մեկին և Հայաստանի ՄՈՊՐ-ի Կենտկոմին։ Առաջինը Գ. Դիմիտրովի պատասխանն էր կոլտնտեսականների նամակին, որտեղ նրանք հաղորդում էին տնտեսական և կուլտուրական ճակատներում իրենց հաջողությունների մասին։ Գ. Դիմիտրովը հայտնում էր, որ այդ հաջողություններն ուրախացնում են իրեն, և ինքն առանձնապես ուրախ է, որ գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրության մշակումից հետո շատ մենատնտեսներ մտել են կոլտնտեսության մեջ։ «Ձեր դիմումը բեռնատար մեքենա ձեռք բերելու մասին,— գրում էր նա,— հանձնեցի ընկ. Ձերնովին՝ ՍՍՀՄ հողժողկոմին, ծանոթացնելով նրան ձեր հաջողությունների հետ։ Ի պատասխան դրան, ընկ. Ձերնովն այդեղ հայտնել է ինձ, որ նա կարգադրել է Սելխոզսնար (գյուղատնտեսական մատակարարման) գրասենյակին՝ անմիջապես ուղարկել մի մեքենա ձեր կոլտնտեսությանը։

---

12 «Կարմիր ֆրոնտ», 1935, № 3—4, էջ 17։

13 «Ֆաշիզմի հարձակումը և կոմունիստական ինտերնացիոնալի խնդիրները ֆաշիզմի դեմ բանվոր դասակարգի միասնության համար մղվող պայքարում։ Զեկուցում և եզրափակման խոսք Կոմունիստական ինտերնացիոնալի համաշխարհային 7-րդ կոնգրեսում, 1935 թ. օգոստոսի 2-ին», Երևան, 1935։

Հուսով եմ, որ դուք համերաշխորեն և բարեխղճորեն կկատարեք ձեր վրա վերցրած պարտավորությունները։

Անկեղծորեն ցանկանում եմ Մայիսի մեկը՝ միջազգային պրոլետարիատի մեծ տոնը, դիմավորեք նոր հաղթանակներով, կատարելով 1935 թվի ձեր ցանքի պլանը ժամկետից շուտ, լինել առաջավոր կոլտնտեսությունների շարքերում»[14]։

Հայաստանի ՄՌՊՐ-ի Կենտկոմին Գ. Դիմիտրովի ուղարկած նամակի առիթը, որպես նվեր հայկական գորգ ստանալն էր։ «Թանկագին ընկերներ,— գրում էր Գ. Դիմիտրովը,— ՍՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի միջոցով ես ստացա ձեր ուղարկած գորգը։

Ընդունելով այդ որպես գորգագործական միության բանվորների, ինչպես նաև Սովետական Հայաստանի բոլոր աշխատավորների միջազգային համերաշխության զգացմունքների արտահայտություն, ես ձեզ խնդրում եմ ընդունել իմ ամենախորը շնորհակալությունը։

Այժմ մեր բոլորի ուշադրությունը, և ամենից առաջ ՄՈՊՐ-ի և նրա սեկցիաների ուշադրությունը պետք է կենտրոնացվի այն պայքարի վրա, որ մղվում է կապիտալիստական զնդաններում տառապող ընկ. ընկ. Թելմանի, Ռակոշիի և բոլոր մյուս հեղափոխական մարտիկների փրկության համար։ Ազատել նրանց ֆաշիստական դահիճների ճանկերից—ահա մեր բոլշևիկյան պարտականությունը։ Հիշեցե՛ք, ընկերներ, որքան մենք ավելի ամրապնդենք մեր ՄՈՊՐ-ը՝ հեղափոխական մարտիկներին օգնող միջազգային կազմակերպությունը, այնքան լավ կօգնենք արտասահմանյան պրոլետարիատին՝ կապիտալի հարձակման և ֆաշիզմի ու պատերազմի դեմ նրա մղած պայքարում, այնքան ուժեղ կլինի նրա պայքարը դասակարգային թշնամու դեմ, այնքան այդ պայքարը շուտ կհասցնի ամբողջ աշխարհում Հոկտեմբերի Կարմիր դրոշի, Մարքսի, Էնգելսի, Լենինի դրոշի վերջնական հաղթանակին։

Ողբայրական բոլշևիկյան ողջույն

ձեր Գ. Դիմիտրով»[15]։

«Կարմիր ֆրոնտը» զետեղել էր Գ. Դիմիտրովի մեծ դիմանկարը։ Հանդեսը հայտնում էր, որ Ալավերդում կազմակերպվել է հեղափոխականների անվան 13 արտադրական բրիգադ (Է. Թելմանի, Գ. Դիմիտրովի, Մ. Ռակոշիի և այլոց)[16]. Լենինականում հաջողությամբ գործում էր Գ. Դիմիտրովի անվան ՄՈՊՐ-ական բրիգադը։

Արձագանքելով Դիմիտրովի վերոհիշյալ կոչին, ինչպես ողջ երկրի, այնպես էլ Հայաստանի ՄՈՊՐ-ականները եռանդուն աշխատանք են ծավալում միջազգային պրոլետարիատի համերաշխությունն ամրապնդելու, ֆաշիստական զնդաններում տառապող մարտիկներին ազատելու և ֆաշիզմի զոհերի երեխաներին օգնելու համար։

1936 թ. ՄՈՊՐ-ի Հայաստանի Կենտկոմի հրատարակչությունը Հ. Մազմանյանի թարգմանությամբ Երևանում հրատարակեց Վ. Պիկի «Ազատություն Թելմանին» գիրքը, որը սկսվում էր «Դիմիտրովի դատավարությունից դեպի Թելմանի դատավարությունը» նախաբանով։ Գրքում ասված էր. «Գեորգի Դի-

---

14 «Կարմիր ֆրոնտ», 1935, № 5, էջ 2։

15 Նույն տեղում, էջ 3, «Коммунист», 30. III. 1935.

16 «Կարմիր ֆրոնտ», 1935, № 5, էջ 23։

միտրովն իր բոլշևիկյան, հերոսական վարքագծի շնորհիվ Լայպցիգի դատավարությունը դարձրեց արյունռուշտ ֆաշիզմի դեմ ուղղված դատավարություն։ Նա ոչ միայն ֆաշիզմին ստիպեց պաշտպանվել, այլև ամբողջ աշխարհի առաջ նրան ետնեցրեց մեղադրյալների աթոռին։ Համաշխարհային ամբողջ հասարակայնության առաջ մերկացրեց նացիոնալ-սոցիալիստների սարքած պրովոկացիան ու կեղծիքը։ Գեորգի Դիմիտրովը նաև հոգս ցնդեցրեց նույնպիսի կեղծ նյութերը, որոնք պատրաստված էին Կենտրոնական կոմիտեի և նրա առաջնորդ Թելմանի դեմ հետագայում դատավարություն կազմակերպելու համար»[17]։

«Կարմիր ֆրոնտը» 1936 թ. № 10—11-ում ՄՈՊՌ-ի բուլղարական սեկցիայի անլեգալ օրգանից թարգմանաբար արտատպում է հոդված՝ 1935 թ. սկզբին Խաղկովո քաղաքի զորամասերում հեղափոխական աշխատանք տանելու համար կախաղան բարձրացված մարտիկների մասին։ Հոդվածում նշվում էր, որ «Բուլղարիայի աշխատավոր մասսաներն ընդհանուր ճակատ են ստեղծում պայքարելու ֆաշիզմի դեմ, բարձր պահելով իրենց ղեկավարի՝ ընկ. Գ. Դիմիտրովի դրոշը։ Նրա օրինակով հազարավոր մարտիկներ են դաստիարակվում ֆաշիզմի ու ռեակցիայի դեմ, ազատ ու երջանիկ Բուլղարիայի համար»[18]։

Ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկությունը խորը վշտով ընդունեց Գ. Դիմիտրովի մահը։ Այդ կապակցությամբ Հայաստանում լույս տեսնող բոլոր թերթերը տպագրում են Գ. Դիմիտրովի նկարը և պաշտոնական հաղորդագրություններ նրա մահվան մասին։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը Գ. Դիմիտրովի մահվան առթիվ ցավակցական հեռագիր է ուղարկում Բուլղարական Դեմոկրատական Հանրապետության Մինիստրների խորհրդին։ Սովետական Հայաստանի քաղաքներում և գյուղերում տեղի են ունենում սգո միտինգներ։ Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանում կազմակերպված սգո միտինգում ստախանովական բանվոր Ա. Պողոսյանն ասում է. «Մեր սրտերում հավերժ կապրի Գեորգի Միխայլովիչ Դիմիտրովի պայծառ հիշատակը։ Մենք կշարունակենք պայքարել հանուն այն մեծ գործի, որի համար իր ամբողջ կյանքի ընթացքում պայքարել է Դիմիտրովը»[19]։ Լենինականի կոշիկի ֆաբրիկայում տեղի ունեցած սգո միտինգում արտադրամասի վարիչ Օ. Տիգրանյանն ասում է. «Ընկեր Դիմիտրովի հիանալի կյանքը ամբողջ աշխարհի աշխատավորներին այսուհետև ևս կոգեշնչի հակաիմպերիալիստական դեմոկրատական լագերի ամրապնդման, սոցիալիզմի հաղթանակի համար»[20]։ Ղափանի Դիմիտրովի անվան կոլտնտեսությունում տեղի ունեցած միտինգում բրիգադավար Շ. Հովակիմյանն ասում է. «Մեր կոլտնտեսականները խորապես վշտացած են մեր սիրելի բարեկամ Դիմիտրովի մահվամբ։ Մենք միշտ բարձր ենք պահել նրա անունը և արտադրական առաջադրանքները կատարել և գերակատարել ենք»[21]։ Գ. Դիմիտրովին հրաժեշտ տալու մասին պաշտոնական հաղորդագրություններում ընդգծվում էր, որ

---

17 Վիլհելմ Պիկ. Ուղերձ Թելմանին, Երևան, 1936, էջ 20—21։

18 «Կարմիր ֆրոնտ», 1936, № 10—11, էջ 33։

19 «Սովետական Հայաստան», 3. VII. 1949։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում։

բուլղարական ժողովրդի մեծ զավակ Գ. Դիմիտրովի անունը, որն իր ամբողջ կյանքը նվիրեց պայծառ ապագայի համար մղվող պայքարին, մոտիկ և թանկ է բոլոր աշխատավորներին, առաջավոր ամբողջ մարդկությանը։ Այդ անունը գիտեն մեր երկրի ամեն մի անկյունում՝ հեռավոր Կուրիլյան կղզիներում և Կամչատկայում, Ուկրաինայում և Վրաստանում, Հայաստանում և Տաջիկստանում, Կիրգիզիայում և Ղազախստանում[22]։ Նշվում էր, որ Գ. Դիմիտրովի անունը սովորեցնում է աչքի լույսի պես պահել սովետական և բուլղար ժողովուրդների եղբայրական բարեկամությունը, մինչև վերջ հավատարիմ լինել ինտերնացիոնալիզմի գաղափարին։

Սովետական Միության ժողովուրդների հետ Գ. Դիմիտրովի սերտ կապերը մեծ չափով օժանդակում են սովետական և բուլղար աշխատավորության բարեկամության ամրապնդմանը, ինչպես նաև բուլղարահայության համախմբմանը Սովետական Հայաստանի շուրջը։ Գ. Դիմիտրովի անունը դարձել է այդ բարեկամության խորհրդանիշը։

Սովետական Միությունում, այդ թվում նաև Սովետական Հայաստանում բազմաթիվ գործարաններ, կոլտնտեսություններ, դպրոցներ, փողոցներ, պիոներական դրուժիններ կրում են Գ. Դիմիտրովի անունը։ 1949 թ. Արտաշատի շրջանի Ներքին Ղուլլասար գյուղը վերանվանվեց Դիմիտրով։

1952, 1962 և 1972 թթ. հայ ժողովուրդը եղբայրական մյուս ժողովուրդների հետ միասին նշեց Գ. Դիմիտրովի ծննդյան 70, 80 և 90-ամյակները։ Թերթերում հրապարակվեցին բազմաթիվ նյութեր Գ. Դիմիտրովի մասին և նրա դիմանկարները։

Սովետական Միության ժողովուրդները, ամբողջ աշխարհի առաջավոր մարդկությունը պատրաստվում են մեծ հանդիսավորությամբ նշելու Գ. Դիմիտրովի ծննդյան 100-ամյակը, որը կանցնի պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության, խաղաղության, սոցիալիզմի և դեմոկրատիայի համար պայքարի նշանաբանով, կրկին ու կրկին կցուցադրի այն գործի հաղթարշավը, որին նվիրաբերեց իր ողջ գիտակցական կյանքն ու եռանդը բուլղար ժողովրդի փառապանծ զավակը, Սովետական Միության ու ամբողջ աշխարհի աշխատավորության ջերմ բարեկամն ու աղատության անմահ մարտիկը։

Բուլղարիայի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար, Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության Պետական խորհրդի նախագահ Թոդոր Ժիվկովը ՍՄԿԿ XXVI համագումարում ունեցած իր ելույթում կրկին ու կրկին հավաստիացրեց սովետական ժողովրդին ու սովետական կոմունիստներին, գաղափարների և պայքարի իրենց ընկերներին, որ Բուլղարիայի կոմունիստական կուսակցությունը միշտ հավատարիմ կլինի պրոլետարական ինտերնացիոնալիզմին, կմնա միջազգային կոմունիստական շարժման մարքսիստական-լենինյան հավատարիմ ջոկատը[23]։

Այս հավատարմությունը, սովետական և բուլղար ժողովուրդների հավերժ բարեկամությունը, Գ. Դիմիտրովի լավագույն հուշարձանն է։

---

22 Նույն տեղում։

23 «Правда», 26.II.1981

Г. ДИМИТРОВ И СОВЕТСКАЯ АРМЕНИЯ

ГЕВОРГ ГАРИБДЖАНЯН
Академик АН Арм. ССР

Резюме

Будучи пламенным интернационалистом, Г. Димитров поддерживал связи со многими армянскими революционерами и трудящимися Советской Армении. Трудящиеся Армении горячо приветствовали освобождение из фашистских застенок и приезд в Советский Союз героя Лейпцигского процесса, великого борца против фашизма и войны.

Армянский народ свято чтит память видного деятеля международного коммунистического и рабочего движения, вождя и учителя Болгарской коммунистической партии и всего болгарского народа Г. Димитрова. В Советской Армении его именем названы село, колхозы, школы, улицы, пионерские дружины. На армянском языке изданы его произведения, книги о нем, многочисленные статьи.